# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԻՐԱՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 02.05.2025Թ. N ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Իջևան «29» մայիս 2026թ.

«ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը», ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԽԱՉՄԻՇՇԻՆ ՍՊԸ-ն և ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՍՊԸ ՀԳ-ն, ի դեմս տնօրեն-լիազորված անձ Խաչատուր Համզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 02.05.2025թ. թիվ **ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/02-1** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և իր անբաժանելի մաս կազմող թիվ 2 Համաձայնագրով սահմանված ժամկետի 30 օրացուցային օրով երկարացված ժամկետում՝ 25.07.2026թ. իրականացնել և ավարտել Պայմանագրով նախատեսված ծավալաթերթի աշխատանքներն՝ ամբողջությամբ:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված՝ 1 էջից կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

### 3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
**ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ**
**ք. Իջևան, Սահմանադրության 1**
**ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ վարչություն**
07628257
900371002917

------------------------ Արման Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ԽԱՉՄԻՇՇԻՆ ՍՊԸ և
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՍՊԸ» ՀԳ
**ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան,**
**Նալբանդյան 1/5**
**ՀՎՀՀ՝ 07613551**
**Հ/Հ՝ 22 010 333 034 0000**
**Բանկ՝ <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>**
**ԲԲԸ Իջևանի մ/ճ**

**Տնօրեն-լիազորված անձ**
**Խաչատուր Համզյան**

------------------------
(ստորագրություն)
Կ.Տ